

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

‘ ’ ----- 2017 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի

N 1457-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի
պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության
նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերի
զինծառայողների, Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի
փրկարարական ծառայողների իրային ապահովության կարգը
(չափաքանակները) սահմանելու մասին>> N 1457-Ն որոշման մեջ կատարել
հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման վերնագրում և 1-ին կետի 3-րդ ենթակետում <<տարածքային
կառավարման և>> բառերը հանել.

2) որոշման նախաբանում <<Չինծառայողների և նրանց ընտանիքների
անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 30.1-ին հոդվածի>> բառերը փոխարինել
<<Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի>> բառերով.

3) որոշման 1-ին հավելվածի N 7 չափաքանակի <<Ծանոթագրություններ.>> մասում լրացնել 7-րդ կետը՝ հետևյալ բովանդակությամբ.

<

1) համազգեստի պարագաներ, վերնաշապիկ՝ երկարաթև, փողկապ, կոշիկ՝ կարճաճիտ, խրոմե, մարզակոշիկներ, հողաթափ՝ գորանոցային, հանդերձանք հատկացվում են 3 տարի ժամկետով.

2) կոստյում՝ ձմեռային, դաշտային, հատկացվում է 2 լրակազմ և 3 տարի ժամկետով.

3) ներքնաշոր՝ տաք, հատկացվում է 3 լրակազմ և 3 տարի ժամկետով:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: